# Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿ(Բ)Պ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օրերս Մոսկվայում կայացավ ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի Պլենումը։

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն որոշեց 1952 թվականի հոկտեմբերի 5-ին հրավիրել ՀամԿ(բ)Պ հերթական XIX համագումարը։

## XIX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը—զեկուցող՝ Կենտկոմի քարտուղար ընկ. Գ. Մ. Մալենկով։
2. ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետու զեկուցումը—զեկուցող՝ Վերստուգիչ Հանձնաժողովի նախագահ ընկ. Պ. Գ. Մոսկատով։
3. Պարտիայի XIX համագումարի դիրեկտիվները ՍՍՌՄ զարգացման 1951—1955 թվականների հինգերորդ հնգամյա պլանի վերաբերյալ—զեկուցող՝ Պետպլանի նախագահ ընկ. Մ. Զ. Սաբուրով։
4. Փոփոխություններ ՀամԿ(բ)Պ կանոնադրության մեջ—զեկուցող՝ Կենտկոմի քարտուղար ընկ. Ն. Ս. Խրուշչև։
5. Պարտիայի կենտրոնական օրգանների ընտրությունները։

## ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆ ԵՎ ԴԵԼԵԳԱՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

1) Մեկ դելեգատ վճռական ձայնով պարտիայի 5000 անդամից։

2) Մեկ դելեգատ խորհրդակցական ձայնով պարտիայի անդամության 5000 թեկնածուից։

3) Պարտիայի XIX համագումարի դելեգատներն ընտրվում են պարտիայի կանոնադրության համաձայն փակ (գաղտնի) քվեարկությամբ։

4) ՌՍՖՍՌ պարտկազմակերպություններից դելեգատներն ընտրվում են մարզերի, երկրամասերի եվ ավտոնոմ ռեսպուբլիկաների պարտիական կոնֆերենցիաներում: Մյուս միութենական ռեսպուբլիկաներում դելեգատներն ընտրվում են մարզային պարտիական կոնֆերենցիաներում կամ միութենական ռեսպուբլիկաների կոմպարտիաների համագումարներում՝ միութենական ռեսպուբլիկաների կոմպարտիաների Կենտկոմների հայեցողությամբ:

5) Սովետական Բանակի, Ռազմա-Ծովային Նավատորմի եվ Պետական անվտանգության մինիստրության սահմանապահ զորամասերի պարտիական կազմակերպությունների մեջ մտնող կոմունիստները պարտիայի XIX համագումարի դելեգատներ են ընտրում միացած պարտիական կազմակերպությունների հետ միասին մարզային, երկրամասային պարտկոնֆերենցիաներում կամ միութենական ռեսպուբլիկաների կոմպարտիաների համագումարներում:

ՀԱՄԿ(բ)Պ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ի. ՍՏԱԼԻՆ